

ՈՉ ՈՔ ՊԻԾԻ ԳԻՏԱԱ, ԹԵ ԵՍ ԻՐ ՀԵՏ ԶԵՄ

«Ահա հայտնվեց, ահա հեռանում է ինքներդ եք տեսնում թե ով» - իր ինքնակենսագրական գրքի անունն է: Մեզ մնում է վկայել, թե անցորդը ինքը, այս տանջված ու խեղճ ադամորդու և, ուրեմն, գրականության բարձրյալի պատգամախոսն էր: Եկավ անցավ և դեռևս չգնացողներիս, առայժմ հիացած մնացողներիս թողեց ծեռ ի բերան՝ թե ի՞նչ ազնիվ նյութերից է գնրված մայր երկիրը, ի՞նչ զավակների է ընդունակ և որպես մարդկության ու մարդկայնության հայրենիք դեռ ինչքա՞ն է արժանի ճախրելու տիեզերքում:

Իր խոսքն ու դավանանքն է՝ մտքի և խղճի ցուցադրում լինելուց առաջ գրականությունը խոստովանություն է. այլ խոսք՝ գրականությունն այն է լինելու, ինչ որ ինքդ ես:

Դարձյալ իր խոսքն է՝ «Ոչ ոք պիտի գիտնա, թե ես իր հետ չեմ». այլ խոսքով՝ ինքդ քեզ տեսնում ես ամենի ու ամենքի մեջ՝ պատանիների ու աղջիկների, կանանց ու տղամարդկանց, կենդանիների ու ծառերի, մանուկների ու ծերերի, և ինքդ քեզ նայում ես նրանց միջից, ավելի ճիշտ՝

Բայց ո՞վ կտար են վայելքը, որ ինքս ինձ էլ չզգայի
Ու հալվեի՝ ծավալվեի, ամենքի մեջ լինեի:

Լավ գրքեր շատերն են գրում. յուրաքանչյուր ոք կարող է գոնենի լավ գրքի հեղինակ լինել՝ իր կյանքը. բայց այնպիսի գրքեր, որ ժամանակակիցների ու հետնորդների համար աշխարհայացքային նշանակություն ստանան, հազվագյուտներին է տրված, և Սարոյանն այդ հազվագյուտների մեջ եզակի էր:

Նա հեգնում ու խերում էր գրականության այն օրենսդիրներին, ում համար մարդուց՝ մեր բոլորից ու յուրաքանչյուրից վերն ու լրիվը իրենց պատկերացումն է մեր նասին, և ովքեր տապակվում են իրենց ազգային-դասային-ցեղային-դավանանքային նախապաշարումների մեջ և ջանում են սրբագրծել այն, ինչը իրենց իսկ կարծ մտքի ծնունդն է: Այդտեղ նա ծիծաղում էր, որովհետև այդ օրենսդիրները նրան պատկերանում էին ոչ թե որպես մայրորդիներ, այլ ուրիշ Աստծու բերանից ելածներ:

Եվ դարձյալ իր գրքից է. «Գրում էի ներգաղթողների անգլերենով. դա վայրագություն էր լեզվի հանդեպ, հրատարակչիները սարսափած ետ էին քաշվում, բայց ես այդ էի, և նրանք ի վերջո տեղի տվեցին»: Յեռուստատեսային հարցագրույցի ժամանակ լրացրեց. «Ես ճնշվածների կողմն եմ. եթե այդ ներգաղթողները՝ իմ հայրը, հորեղբայրը, ազգականներս, մշեցիները, բիթլիսիցները, Ամերիկայի մեջ արհամարհված մարդիկ չլինեին, թերևս

գրեի ո՞չ նրանց մասին և ազգանունս էլ Սարոյան չթողնեի, ինչպես մեր հայրենակից մեկը՝ որ շնորհալի գրող էր, բայց իր ազգությունից խուսափեց. իր ցեղը, ծնողներին, ազգությունը թաքցնող որևէ մեկը չի կարող ճշմարիտ գրող լինել»: Եվ, օրեր անց կամ առաջ, գոհունակության թերք ժամանով՝ «Գիտե՞ս, ճապոն տղայոց մեջ կա՝ որ անուն Արամ է. իմ գիրքերեւ առած են»: Այդպես:

Հորժամ քնարս ին ցրտանա՝
Սիրույն տալով վերջին բարև -
Երթամ ննջել զիմ Կիլիկիա՝
Աշխարհն, որ ինձ ետուր արև։

Բոլոր սերերը մարելուց հետո ցրտած քնարով միակ անմարելիին դառնալը շատ ու շատ նուրբ հոգիների վերջին ճախրն է, բայց ահա հենց սկզբից, հենց պատանեկան հպարտ հասակում, երբ ամբողջ աշխարհն է գրկաբաց մայր ու սիրուիի թվում, ետղարձի ճանապարհ բռնել դեպի «արնավառ Յայաստան յարո»՝ սա արդեն եզակիորեն եզակի շնորի է, սա արդեն սերտածում է հանճարի բուն եռւթյունից, այսինքն թե այդ ճանապարհը լքելը հրաժարումն կլիներ գրականության բուն խորքերը տանող ճանապարհից: Նա անընդհատ հայրենիքի ճանապարհին էր: Կարծ հայրենիքը նա ճշմարիտ գրականության ճանապարհին գտավ, և խիզախ, անկասեցնելի հոգու, ոգեկան այդ ձեռքբերումն արդեն անկապտելի էր որպես մեծ գրականության եռւթյուն:

Եվ, իհարկե, դեպի հայրենիք այդ շարունակական, անվախճան, անընդհատ սկսվող և երբեք ավարտվող ճախրը պիտի ավարտվեր գեղեցկորեն նույնքան շիտակ, ինչպես իր ողջ կյանքն ու գործն էր, մի վայրէջքով՝ աճյունը հայրենի հողին ի պահ տալով. մարմինը, ուր ինքն էր բնակվում, հայրենի երկնքից աճյուն դարձած պիտի իջներ հայրենի հողին: